Հոկտեմբեր 17-ին այցելեց Մայր Աթոռս Երկրագործու-թեան Կառավարչապետի Խորհրդի անդամ Տայնի Սովետնիկ Պրախով.

---

Հոկտեմբերի 16—17 ուխտի եկած լինելով Մայր Աթոռս Գիւլպէնկեան Պատրիկ էֆէնդին, Մայր Տաճարի որմերից, Հանգ. Մկրտիչ կաթողիկոսի, պտկոտած պատկերները շրջանակի մէջ առնելու համար նուիրեց 500 ռուբլի։

---

✝

**ՍՏԵՓԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՋԱՏԵԱՆ**

Կտուց անապատի վանահայրը, տարւոյս սեպ-տեմբերի 19 ին վախճանուեց 59 տարեկան հասակում։ Հանգուցեալը ուսել էր Վարագայ վանքի ժառան-գաւորաց դպրոցում, ձեռնադրուել է վարդապետ՝ 1876 թուին, եպիսկոպոս՝ 1910 թուին սեպտեմբերի 19-ին։

Հանգուցեալը իւր քաղցր բնաւորութեամբ և շինա-րար յատկութեամբ վայելում էր ընդհանուր յարգանք և սէր մանաւանդ իւր խնամքին յանձնուած միաբա-նութեան մէջ։

Տէր լուսաւորէ հանգուցելոյ հոգին. ամէն։

---